Հավելված N 5
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի
2018 թվականի հունիսի 29-ի
N 481-Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) փոքր և միջին ձեռնարկատիրությանն զարգացման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Նախարարության կանոնադրության պահանջներին համապատասխան:

2. Վարչությունն իր իրավասությունների շրջանակներում պատասխանատվություն է կրում իր վրա դրված խնդիրների ու գործառությունների ժամանակին և պատշաճ իրականացման համար, հաշվետու է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարին (այսուհետ՝ նախարար):

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում նախարարը՝ նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով վարչության պետի և համակարգող պաշտոնատար անձի հետ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Հայաստանի Հանրապետության տնտեսության հիմնական ուղղությունների մշակման բնագավառում վարչության խնդիրն է՝

1) Հայաստանի Հանրապետությունում գործող փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների զարգացման խթանում.

2) Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության, փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրերի մշակում և ՓՄՁ զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման դիտանցում.

3) միջազգային հարթակում Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության պատշաճ ներկայացում, լավագույն փորձի փոխանակում և դրա տեղայնացում.

4) ՓՄՁ զարգացմանը խոչընդոտող գործոնների հայտնաբերում և դրանց վերացմանն ուղղված աշխատանքների իրականացում:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչությունն իր առջև դրված խնդիրների իրականացման համար իր իրավասությունների սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) Փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) զարգացման քաղաքականության մշակում և իրականացում.

2) ՓՄՁ զարգացման պետական աջակցության տարեկան ծրագրի մշակում, վերջինիս իրականացման ընթացքի նկատմամբ մոնիթորինգի իրականացում, հաշվետվությունների ստացում և դրանցում պարունակվող տեղեկությունների վերլուծում.

3) ՓՄՁ զարգացման գործիքների մշակում, ըստ անհրաժեշտության առկա գործիքների փոփոխության առաջարկությունների ներկայացում.

4) Պետություն-մասնավոր հատված երկխոսության, համապատասխան վիճակագրական տվյալների և այլ վերլուծությունների իրականացման արդյունքում ՓՄՁ ոլորտի զարգացմանը խոչընդոտող գործոնների բացահայտում ու դրանց հաղթահարման ուղղությամբ առաջարկությունների մշակում.

5) Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ աջակցման ծրագրեր իրականացնող օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության խորացում և իրականացվող աջակցության ծրագրերի համակարգում՝ կառավարության կողմից նույն ուղղությամբ վարվող քաղաքականության նպատակներին համադրման և ներդաշնակեցման միջոցով, Հայաստանի Հանրապետություն կառավարության կողմից ստեղծված՝

ձեռնարկատերերին աջակցող կառույցների և նախարարության փոխհարաբերությունների խորացում.

6) ՓՄՁ զարգացման խորհրդի նիստերի անցկացման նախապատրաստում՝ ապահովելով օրակարգում ներառված հարցերի՝ շահագրգիռ կառույցների հետ նախապես քննարկումը, համաձայնեցումը և վերլուծումը.

7) միջազգային պրակտիկայում առկա և Հայաստանի Հանրապետության նկատմամբ կիրառվող՝ փոքր ու միջին ձեռնարկատիրության պայմանները գնահատելու հարցումների մեթոդաբանությունների ուսումնասիրում, Հայաստանի Հանրապետության վերաբերյալ տրված գնահատականների պատճառների վերլուծում և անհրաժեշտ բարեփոխումներին ուղղված միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

8) ՓՄՁ սուբյեկտների կողմից կառավարությանն ուղղված հարցումների ստացում, դրանց վերաբերյալ պարզաբանումների և պատասխանների պատրաստում, անհրաժեշտության դեպքում դրանցից բխող քայլեր կատարելու (այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունների) վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

9) ՓՄՁ սուբյեկտների սահմանմանը համապատասխան՝ ՓՄՁ-ի ոլորտի վերաբերյալ վիճակագրության վարում.

10) իր իրավասությունների սահմաններում պետական և տեղական կառույցների հետ համագործակցության իրականացում:

6. Վարչությունը կարող է իրականացնել իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

7. Վարչության կառուցվածքն ու հաստիքային ցուցակը հաստատում է նախարարը՝ նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով վարչության պետի և համակարգող պաշտոնատար անձի հետ:

8. Վարչությունը՝

1) իր իրավասությունների շրջանակներում կազմակերպում և իրականացնում է աշխատանքներ՝ համագործակցելով նախարարության այլ ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետություն շահագրգիռ նախարարությունների և

գերատեսչությունների, ինչպես նաև տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ,

2) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետություն շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների համագործակցությամբ, նախապատրաստում է վարչության գործունեության ոլորտներին վերաբերող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծեր,

3) Հայաստանի Հանրապետություն կառավարության գործունեության ծրագրին համապատասխան, նախարարության կառավարման և համակարգման ենթակա ոլորտներում նախապատրաստում և ներկայացնում է հաստատման վարչության ծրագրերը, ինչպես նաև հետևում է դրանց պատշաճ կատարմանը:

9. Վարչության աշխատանքների ղեկավարումը իրականացվում է վարչության պետի կողմից:

10. Վարչության պետը՝

1) իրականացնում է վարչության աշխատանքների կազմակերպումը և ընդհանուր ղեկավարումը,

2) պատասխանատու է վարչությունում համապատասխան աշխատանքային մթնոլորտի և կարգապահության ապահովմանը, վարչությունում աշխատակիցների միջև աշխատանքների հավասարաչափ բաշխման և դրանց կատարման համար,

3) բացահայտում, վերլուծում և գնահատում է վարչության առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում է այդ աշխատանքների կատարումը: